



Դու ես կերտում քո ժամանակը:  
Համոզված եղիր՝ տարիներ հետո  
Քո կերտած ժամանակը լավն է թվալու...

# ՔՐՈՆ

# ԺԱՄԱՆԱԿԸ

## ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Միրելի՛ համալսարանական,

Ես «Քո ժամանակն» եմ: Ուզում եմ դառնալ քո ընկերը: Խոստանում եմ, որ մեր գրույցները չեն սահմանափակվի միայն համալսարանին վերաբերող թեմաներով: Իմ միջոցով կտեսնես քո ժամանակի հետաքրքիր մարդկանց, առհասարակ, խոստանում եմ՝ ինձ հետ չես ճանճրանա: Հույսով սպասված հյուր կլինեմ:

## ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ



Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաև Չատիկ, որը նշանակում է գատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված:

Չատիկը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է: Հիսուս Քրիստոսի խաչելությունից եւ մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինը իջեցրին խաչից եւ դրեցին վիմափոր գերեզմանի մեջ՝ փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը եւ Սողոմեն, գնացին գերեզման՝ անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակ եւ ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ» (Գուկ. 24:5-6):

Հարության լուրը կանայք ավետեցին առաքյալներին, որից հետո Հիսուսը երևաց նրանց: Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության եւ հավատի հիմքը: «Եթե մեռելների հարություն չկա, ապա եւ Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը» (Ա Կորնթ. 15:13-14):  
Ս. Հարության տոնի նախընթաց

երեկոյան եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի ս. պատարագ, որով սկսվում են գատկական տոնակատարությունները: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա մատուցվում տոնական ս. պատարագ: Սուրբ Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս Յարեալի մեռելոց» ավետիսով, պատասխանում՝ «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Չատիկ տոնին հավատացյալները ձու են ներկում: Ներկված ձուն համարվում է Հարության եւ նոր կյանքի խորհրդանշան: Կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Ըստ ս. Գրիգոր Տաթևացու, «Միայն Չատիկն ենք ձու ներկում, որովհետեւ ձուն օրհնակ է աշխարհի», եւ ինչպես իմաստուններն են ասում. «Գրքի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը Հայ Եկեղեցին նշում է հիսուն օր շարունակ՝ մինչև Հոգեգալստյան (Պենտեկոստե) տոն: Այս ընթացքը կոչվում է Հինանց շրջան կամ Հինունք, որը ծագում է «հիսունք» բառից: Հինանց շրջանի քառասուն օրերը Հարուցյալ Քրիստոսի՝ աշակերտներին երևալու եւ Աստծո արքայության մասին վկայություններ տալու հիշատակությունն են (Գործք 1:3), իսկ վերջին տասն օրերը նվիրված են Քրիստոսի Համբարձմանը: Հինանց շրջանը ավարտվում է Հոգեգալստյան տոնով: Համբարձումից տասն օր հետո, ըստ Քրիստոսի խոստման, առաքյալների վրա իջավ Աստծո Սուրբ Հոգին, եւ գորացած առաքյալները վկայեցին Քրիստոսին ամբողջ աշխարհով:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼ Ի ՄԵՌԵԼՈՑ:  
ՕՐՀՆԵԱԼ Ե ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:  
qahana.am

## ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՐԹԱԿ

Մարտի 14-ին անվտանգության ծախսերի մասին հարցազրույցի ընկերության նախագահությանը կազմակերպված «Եղիշե Զարեհի անվան ամենամյա բանաստեղծական մրցույթի» արդյունքները:

Մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած 27 մասնակիցները հանդիսատեսին եւ ժյուրիի անդամներին ներկայացրեցին իրենց չափածո ստեղծագործությունները, որոնք ընդմիջվում էին չարենցյան ընթերցումներով: Ներկայացված բանաստեղծությունների թեմաները տարբեր էին, սակայն դրանց մեջ, ինչպես միշտ, գերակշռում էր սիրո եւ հայրենիքի թեման: Մրցույթին ներկայացված ստեղծագործությունները պետք է գնահատվեին ժյուրիի կողմից մի քանի չափանիշներով. լեզու եւ կառուցվածք, ինքնատիպություն, նորույթ, ներքին ուժ: Ժյուրիի կազմում ընդգրկված էին բանաստեղծ Ռոբերտ Եսայանը, արձակագիր Համլետ Մարտիրոսյանը (Մարտիրոս Ռբն), լեզվաբաններ Հասմիկ Դազարյանը եւ Շուշանիկ Մաղյանը: Նախքան արդյունքների ամփոփումը՝ ժյուրիի անդամներն իրենց կարծիքն արտահայտեցին ինչպես մրցույթի, այնպես էլ առանձին հեղինակների ստեղծագործությունների վերաբերյալ՝ նշելով, որ նման մրցույթների կազմակերպումն առաջին հերթին կարևոր է երիտասարդ ստեղծագործողների ճանաչման համար եւ հաջողություններ մատուցելու հետագա քայլերում:

Ռ. Եսայանը, ողջունելով մրցույթի կազմակերպման գաղափարը, նշել է, որ ներկայացված ոչ բոլոր ստեղծագործություններն էին բանաստեղծություն եւ ոչ բոլոր տողերն էին պոետական: Հաջողված բանաստեղծություններ, այնուամենայնիվ, կային: «Մրցույթի բոլոր մասնակիցներն էլ յուրովի ապացուցեցին, որ Արցախում ոչ միայն լավ երիտասարդություն է աճում, այլ նաև պոետական հետաքրքիր սերունդ», - հավելել է բանաստեղծը:

Երիտասարդ ստեղծագործողները մասնագիտական խորհուրդներ ստանալու հնարավորություն ունեցան: Հ. Մարտիրոսյանը խորհուրդ տվեց հանուն բառի կամ հանգի չսպանել գաղափարը, բառի հանդեպ լինել խստապահանջ, ի վիճակի լինել ջնջելու այնքան, մինչև իսկական պոետական խոսք ստացվի, որի համար նվիրում է պետք:

Ժյուրիի գնահատականների եւ կարծիքների ամփոփման արդյունքում մրցանակային տեղեր են զբաղեցրել համապատասխանաբար Արմինե Բաղդյանի, Արևիկ Լալայանի եւ Մրտակ Բեգլարյանի ստեղծագործությունները: Մրցանակային տեղեր զբաղեցրած հեղինակները պարգևատրվել են պատվոգրերով եւ գրքերով, առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ նաև դրամական պարգևով: Պատվոգրերով պարգևատրվել են եւս յոթ հեղինակներ, որոնց ստեղծագործություններն արժանացել են ժյուրիի ուշադրությանը:

ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի առաջարկով պարգևատրվածների ստեղծագործությունները կտպագրվեն ԳՄ «Եղիցի լույս» գրական պարբերականում:

## ՎՈԼԵՅԲՈԼԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՇԱՐ

Մարտի 23-ից 29-ը ԱրՊՀ-ում անցկացվել է աղջիկների միջև վոլեյբոլի փոխանցիկ գավաթի խաղարկություն:



ՈՒԽ նախաձեռնությամբ կազմակերպվող ամենամյա մրցաշարին մասնակցում էին հինգ թիմեր՝ համալսարանի համապատասխան ֆակուլտետներից: Հինգ օր տևած մրցաշարի արդյունքում մրցանակային



տեղեր են զբաղեցրել հ ա մ ա պ ա տ ա ս ի խ ա ն ա բ ա Ր տնտեսաճարտարագիտական, մանկավարժության եւ սպորտի, բնագիտական ֆակուլտետների թիմերը, որոնք պարգևատրվել են պատվոգրերով: Գավաթը փոխանցվել է առաջին տեղ զբաղեցրած տնտեսագիտարագիտական ֆակուլտետի թիմին:

# ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

**Վեցերորդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի մարտի 24-ի նիստին ներկա էին ման ԱրՊՀ իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողները՝ ամբիոնի վարիչ Ռիտա Առուստամյանի գլխավորությամբ:**

Կապված այն հանգամանքի հետ, որ մենք փորձուսուցում ենք անցել Ազգային ժողովում և մեզ չափազանց հետաքրքիր է իմանալ, թե ինչպես են անցկացվում ԱԺ նիստերը՝ հերթական անգամ ԱԺ նիստերի դահլիճում ենք: Նիստը, ըստ կարգի, բացվեց ԱԺ նախագահի ողջույնի խոսքով, որից հետո կատարվեց պատգամավորների գրանցում: Այնուհետև պատգամավորների հաստատմանն է ներկայացվել նիստի օրակարգը:

Օրակարգում ընդգրկված էին 5 օրենսդրական նախագծեր՝ սննդամթերքի անվտանգության մասին օրենքի, սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին օրենքի, ԼՂՀ-ում ստուգումների անցկացման մասին օրենքի, գյուղատնտեսության մասին օրենք ընդունելու վերաբերյալ: Օրակարգային հարցերի

շուրջ հանդես է եկել ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Արամ Մխոյանը: Բննարկումների պարզաբանումների արդյունքում ներկայացված բոլոր նախագծերն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

Արցախի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորել Գասպարյանը, ով ևս ներկա էր նիստին, ներկայացրել է ընկերության վերջին տարիների գործունեությունը, ապա պատասխանել ներկայների հարցերին և առաջարկություններին: Նիստի ավարտից հետո Ա. Գուլյանը շփվեց մեզ հետ: Կիսվեցինք տպավորություններով և կարծիքներով, որից հետո նա խոստացավ, որ ման հանդիպումներ հաճախակի կկազմակերպվեն:

Շնորհակալություն ենք հայտնում այսպիսի հանդիպումներ կազմակերպողներին, որոնց շնորհիվ ուսանողներս հնարավորություն ենք ստանում տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

*Մարինա Իրավագիտություն 4*

## МАНДЕЛЬШТАМ-125

**На днях в Центральной библиотеке имени М.Маштоца состоялось мероприятие, посвященное 125-летию со дня рождения великого русского поэта Осипа Мандельштама.**

Вечер был организован преподавателями кафедры русского языка и литературы и дирекцией библиотеки имени М.Маштоца. На вечере участвовали студенты филологического факультета АргУ, которые познакомили гостей с биографией и творчеством поэта. Были прочитаны наиболее известные его стихи, прозвучали песни современных исполнителей, посвященные поэту. Особого внимания заслуживают страницы его поэзии, посвященные Армении и Карабаху. Как отметила Анна Ахматова «Мандельштам был влюблен в Армению и оставил бессмертный

цикл в ней». И действительно, ведь он сам признает величие этой страны: «Армения – книга, по которой учились первые люди». Долгие годы имя поэта, также как и его стихи, находились под запретом. Сам Осип Мандельштам писал: «Вскоре стихи мои сольются с русской поэзией, кое-что изменив в ее строении и составе». Спустя 125 лет со дня рождения поэта это признают и литературоведы, и самый главный критик – читатель. Мероприятие прошло в дружеской атмосфере, которая царил в «хранилище книг». После выступлений чтецов гости вечера высказали искреннюю благодарность организаторам и участникам и отметили ценность подобных мероприятий.

*Марина Арутюнян Р. ЯЗ./Лит. 4*

## ՓՈՐՉԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ



**Փետրվարի 26-ին Արցախի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորել Գասպարյանը այցելել է համալսարան՝ ասպագա լրագրողներին փորձ ու գիտելիքներ փոխանցելու:**

Նորել Գասպարյանը գրույցը սկսեց այն հարցով, թե ինչ է լրագրությունը՝ ասլերելու ձև, թե՞ միջոց: Այս հարցի պատասխանը իր համար ակնհայտ է. լրագրությունը ասլերելու ձև է ու փիլիսոփայություն: Գա այն մասնագիտությունն է, որը թույլ է տալիս ճանաչել երկիրը ու նրա բնակիչներին: Իսկ այն լրագրողներին, ովքեր այս հարցին այլ կերպ են պատասխանում,

Ն. Գասպարյանը խորհուրդ է տալիս փոխել մասնագիտությունը: Զրույցի ընթացքում հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահը պատասխանել է ուսանողների հարցերին: Դրանց մեծ մասը վերաբերում էր ասպագա աշխատատեղերին: Ն. Գասպարյանը նշեց, որ թափուր աշխատատեղ չկա, բայց լավ մասնագետի կարիք կա, և վերջինիս առկայության դեպքում հեռուստատեսությունը պատրաստ է ընդունելու աշխատանքի: Բննարկումներից զերծ չմնաց վերջերս ԱՀ-ով հեռարձակված «Ավագե ժամացույց» հեռուստասկումբի թողարկումը, որի համար ուսանողները երատապարտ են:

Մատնանշելով այն փաստը, որ հեռուստատեսությունը հանրային է, ու որ պետք է հաշվի առնել հանրության կարծիքը՝ ավագ կուրսեցիները իրենց կարծիքները հայտնեցին եթերը առավել գրավիչ դարձնելու համար: Հանդիպումը ավարտվել է ասպագայում փորձի փոխանակման խոստովով ու նոր հանդիպումների ակնկալիքներով:

*Տաթև Միրզոյան Լրագրություն 3*

# «ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՄ ՏՈՒՆԵ Է»



**Օրերս ԱրՊՀ ուսանողական խորհուրդը հանդես է եկել հերթական նախաձեռնությամբ, ինչի կապակցությամբ գրուցել ենք ԱրՊՀ ՈւՆ նախագահ Արթուր Ամիրջանյանի հետ:**

Ա. Ամիրջանյանը, խոսելով նախաձեռնության մասին, նշել է, որ գաղափարը ծնվել է օրեր առաջ, երբ պրոռեկտոր Վ. Յարամիշյանի հետ շրջայց էին կատարում համալսարանում. «Նկատեցինք, որ միջանցքներում պատերի վրա փորագրված են անձնանուններ, տեղանուններ, խոստովանություններ և այլ տարաբնույթ գրություններ:

Այնպիսի տպավորություն է, որ ամեն նոր եկողն իր պարտականությունն է համարում

իր ձեռագիրը դաջել այս կամ այն անկյունում: Քանի որ համալսարանը մեր երկրորդ տունն է, ուստի բոլորիս պարտքն է մաքուր և կոկիկ պահել այն»:

Ուսանողական կառույցի ղեկավարի խոսքով, այս ուղղությամբ իրականացվել են նախ քարոզչական բնույթի աշխատանքներ, ապա դիմել են համալսարանի ղեկավարությանը՝ աջակցություն ցուցաբերելու՝ փորագրությունները վերացնելու համար միջոցների տրամադրման հարցում:

Համալսարանի ղեկավարությունը ողջունել է մեր նախաձեռնությունը և կարճ ժամանակամիջոցում տրամադրել անհրաժեշտ ապրանքները, ինչից հետո ուսխորհրդի անդամները համատեղ ուժերով ձեռնամուխ են եղել աշխատանքներին:

«Կոչ են անում բոլոր ուսանողներին ոչ միայն մասնակցել ման աշխատանքների, այլ զերծ մնալ համալսարանի պատերը «գարդարելուց» և այդպիսով օրինակ ծառայել մյուսների համար», - հավելել է Ա. Ամիրջանյանը:

## ՊՈԵԶԻԱ

**Ներկայացնում ենք «Եղիշե Չարենցի անվան ամենամյա բանաստեղծական մրցույթում» առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած ստեղծագործությունները:**

### ԻՆՉՆԻՑ ԵՄ ԷՒ ՊԱԿԱՍՈՒՄ

Ինձնից ես էի պակասում, Տեսնես ու՞ր էի և ուր եմ հիմա...

Եվ մի անհանգիստ իրիկնաժամ էր, Մութը ուզում էր մտքերս ծամել

Ու կուլ տալ հատ-հատ, Ես էլ անընդհատ Նայեցի այս կողմ՝ կորած ժպիտներ,

Նայեցի այն կողմ՝ շատ քարն տխրություն... Մի նոր խանութ կար այն մութ փողոցում,

Զգացումներ էին վաճառել փորձում Բոլորը գնեցին, իսկ ինձ չհասավ:

Չէի էլ ուզում. Ե՛վ թանկ էին շատ, Ե՛վ շատ անորակ, Ա՛յք բեզ մոլորակ:

Քամին քշում էր մտքերս վերջին, Բայց էլ ուժ չկար գժվելու համար.

Խելոք մնացի այն գիշերին մեջ:

*Արմինե Բաղիրյան Հ.Լ./գրակ. 4*

### ՆՈՐ ՄՈՒՍԱՐԱԿ

Ուղեծիր չունեցող մի հավերժական գունդ, Հատում է հավասարակշռությունը երևակայության

Եվ հանգստանում ժամանակների ուղիղ գծի վրա: Մարմնավոր մեղքերը բուժում են զգայարանները հոգու՝ Ազատելով այն խամբած երանգներից ծիածանի,

Եվ դարձնելով հետզհետե ավելի մոտ ու թափանցիկ՝ Ինչպես հորդառատ ջրվեժների չափածո խշշոցը,

Որ թափվում է ամեն գիշեր մեր ունկերին Եզրիպտական անծիր կապույտ անապատից:

Մոտենում է վախճանը նախաստեղծման, Որ գերզգայուն հոգին տեսնում է տաճարները նոր աստվածների, Քարե բազինները դատարկախոս պոետների,

Եվ ավերումը չհաջողված արարումի: Համատարած քառսը հեշտանքով սրբում է

Ջրափոսերը երևակայական ուղիների, Եվ թափանցիկ մտահորիզոնի խոնավ խորքերում Նշմարվում են բոլոր երանգները երկնագույնի:

Ուղեծիր չունեցող հավերժական գունդը, Հատելով սահմանը անհայտ տարածության, Լուռ վայելում է ներդաշնակությունը վերերկրային՝ Որպես հետագիծ թողնելով բանաստեղծությունն իր արարումի:

*Արևիկ Լալայան Հայ գրակ. մագ 2*